

այս ձեւով կը հերքուին եւրոպացի կարգ մը ուղեգիրներու սուտ և առասպելապատում տեղեկութիւնները, զորս անոնք զետեղած են իրենց ուղեգրութեանց մէջ:

Ինչ որ սակայն մասնաւոր շահեկանութիւն մը կու տայ Թիւթիւնճիի ուղեգրութեան, անձանօթ երկիր մը ճամբորդելու իր յանդգնութիւնն է, աչք առնելով ամէն վտանգ, վասնզի ո՛չ լեզուն գիտէր և ո՛չ ալ ոեւէ ծանօթութիւն ունէր իր գացած երկիրին վրայ, ուր չենք գիտեր թէ մինակ գացած է թէ ուրիշներու ընկերակցութեամբ:

Հակառակ անոր որ միշտ «գնացինք», «եկանք» կ'ըսէ, սակայն երբեք ուղեկիցի մը յիշատակութիւնը չ'ըներ, այնպէս որ անորոշ կը մնայ թէ առանձին թէ հետեւորդներով ճամբորդած է: Միայն տեղ մը կը պատմէ, թէ Բադին թագաւորը (Սէննարի) իրեն մարդիկ տուած է, որպէսզի Եգիպտոս հասցնեն զինք (193):

Նոյնպէս յայտնի չէ, թէ այդ օտար երկիրին մէջ ի՛նչպէս յարաբերած է բնիկներուն հետ, որոնց լեզուն չէր գիտեր ապահովարար: Հաւանօրէն թարգմաններ ունեցած է, որոնց խօսքը չ'ըներ սակայն: Իսկ ինչ որ իր գործին կու տայ մասնաւոր կարեւորութիւն մը և զայն կը դարձնէ իսկապէս հետաքրքրական, ատիկա պարագան է այն շատ կարեւոր աշխարհագրական գիւտին, որուն անգիտակից ձեռնարկուն եղած է ինք. վասնզի այս հայ եպիսկոպոսը կապոյտ նեղոսի աղբերակներուն առաջին սպիտակամորթ խաղարկուն կը հանդիսանայ:

Այս կերպով իր պզտիկ «տետրակը» կը դառնայ գիտական աշխարհի համար ալ շահագրգռութեան առարկայ ըլլալու արժանի վճարագիր մը, իսկ իր